

IV. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ, ԾԵՍԵՐ, ԶԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Ա. ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

1(1276). ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏԱՐԵՅԱՑ

Նոր տարվա վախտն ան ըլել, նոր տարվա վախտը պիրել են տնտեսությունը, մինը մեր տնտեսությունը՝ չորս փոխիկ, իրեք տղա, իմ հրոխպերն ուներ մի տղա էլ, ես ի՛ իմ հորը, իմ պապը, իմ տատը, վերջը իմ մերը, իմ հերը, իմ հրոխպերը, իրա կնիկը, պիրին ալի-րը մաղին ու ընքելանը պետք է կնիկ չըհունցի, մարթ՝ տղամարթ ըլի, իմ հորն ասին.-Տու դես հունցիլ:

Առնին պիրին հունցեր ու ընքելանը էտ խմորը էտ աներ, հուլունք տներ միջին:

Հարց.- Սովորական հացի խմոր էր, թե՞ քաղցր խմոր էր:

Պատասխան.- Չէ՛, սովորական խմոր էր, քաղցրը չի քցին: Չէ՛, քաղցրը լավ չի, բախտը լավը չի: Հա՛: Էտ հուլունքը տընին միջին ու էտ անին, օջաղի միջին էրե՛ր, է՛, սիտ օջաղը էտ անին, որ կերանը տան տըռնովը պիրին տընին կրակի վրա, կառավաթ չկար, թախտ չկար, փետ չկար, բուխարի չկար: Էտ էտ տե-հել եմ էլի, ըրեխա եմ ըլել: Էտ օջաղը էտ քա-շին, ու էտ աներ քցեր մեջը, ընքելը մոխրով ծածկեր: Նախ էտ օջաղի վրովը պիրեր թխտեր փռեր, նորից մոխրով վրեն աներ թը-խեր, հաներ թափ տեր, շիներ, ընքելանը հա-ներ քիրեր ու սկսեր... անասունի, ոչխարի տըմակը, էտ հա՛ցը թամո՛ւց տըմակով մաք-րեր, որ սիտ մտիկ անիր՝ պըլպըլեր: Ընքելը տընակով քաշեր կըտրատեր, քանի հոքի են, ամեքը մի կտոր միտ կտոր-կտոր աներ ու բա-ժաներ: Էտ հուլունքը թե որի ծեռին տյուս կըկա, ուրեմը մա բախտավոր ա:

Էն ինչ սուտ ա, էլ ինչ սուտ: Բա իմ հրոխ-պոր ըխճկանը էտ տյուս եկավ, իմ հրոխպոր

ըխճկա բախտըմը, հա՛, անըմն էլ Յազգյուլ էր, Յազգյուլը բախտավոր ա է՛: Աչաճուրը մարթի քյնաց, մի տղա-ըրեխա պիրուց, հերը մեռավ, էտ տղեն մնաց եթիմ հորից: Էտ տղեն էլ էս հայրենական պատերազմովը քյնաց հայրենական պատերազմը, ընդի տառավ հե-րոս: Ընդիան էկավ, անգրագետ, դպրոց էլ չէր քյնացել, ընդիան էկավ, ըստի ռայկոմըմը ըն-թունեցին, կվարտըրքեր տվին, հմի ըրեխքը ունի, ինքն էլ ցախել-ջիվան մեռավ:

Էտ Յազգյուլի հուլունքն էր էտ ա, էտ էր:

2(1277). ՆՈՐ ՏԱՐԻ

Է՛, նոր տարին պանը ո՞րն ա, մեզ միայն ա-մեն օր նոր տարի էր: Նոր տարուն էլ, գիդե՛ս ինչ անինք, ամեն հետ: Ամեն հետ նոր տարի էր, թազմ տարի չէր, հմի թազմ տարի ա տա-ռեկ: ամեն հետ լոթի էփին, ճալի ծուկը պիրին, թորնով լոշ թխին, էտ նոր տարվա թըթախըմն էր, էտ ըրուլունն ուտըմ են: Էտ քըշերն էլ կոր-կոթ են տընըմ՝ նոր տարուն, հա՛ նոր տարվա քըշերն:

Կորկորը ծավարով, ըմարի ծղվարով ու խոզի մսով սարքին: Էն ա սալերը կըտորին, խոզի հա՛, խոզի, տակին տընին, վըրեն ծավարը տի, մըն էլ կտորի վրեն տի, շերտե-շերտ, շերտեշերտ, շերտեշերտ տի պըղնծը-մը, էսքան թերատ ըլի, կըրակին տի, տակը մարմա՛նդ արա՛ խընծրահամի ո՛չ, կամաց է-փի:

Նոր տարվա քըշերը մի լոշ են վեր ունըմ, մի էրկու ծուկն են վեր ունըմ, քյնըմ են ոսկի

ճրդի: Քըշերը քյալ դեն ախալուրը¹: Հա, բա ընդեղ կենալ դեն է, որ ոսկի ճուր տառնա, սաղ քըշերը նստիլ դեն, ճուրը կաղնիլ դի: Ի՞նչ մերն ասեր. «Որդե՞ղ դի կաղնիլ, շա՞շ կեղացի եք, - ասեր, - հասկանըմ չեք, քյընըմ եք քըներ-նուտ կըտըրըմ, թե ճրդի կըշտիեն կենալ դենք»: Ծուկը դեն ուտիլ, լորի դեն ուտիլ, վերջը հլա խրոկած էլ անին, կրակը անին: ճուրը կաղնիլ դի², ախճիկ ջան, որդե՞ղ դի կաղնիլ ճուրը²: Կըկաղնի³, որ տենան³: Որ ամանը տընըմ են ճրդի տակին, ոսկի ա տառնըմ, հա, կուժը ոսկի ա տառնըմ: Ո՛չ կյալիս ա, ո՛չ տընեն: Ը՛է, ոչ մի պոն էլ չեղավ, չ՛է, չ՛է, չ՛է, նըստել են, նըստել, եկել:

Նոր տարուն էտ ա ըլել, ծուկն ա սեղանին, կորկորը, ախճիկ ջան, մընէլ տընական, ով ուզըմ էր, վեր էր կենըմ բիշի թխըմ, ան-դանկ թըխըմ, էտ էր, կամ խավիժ անըմ ծեռաց, էտ պաղրաստին: Համա միի, ախճիկ ջան, դե սեղանը լըքցընըմ են ամեն...

3(1278). ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԱՂԱԲԼԻԹԸ

Աղի Սարգսին յոթ օր, յոթ օր տված կենին, հաց չի ուտի: Դըքա ուրերորդ ըրուզուրը պիրին ըղըպըլիթ անին, ըխճկենք էլ, տղեքն էլ: Էտ ըղըպըլիթը, աղի պիթ ա էլի, աղից ա, ուտին ու ճուր չխմին, քնին, որ քշերը էրազըմ, որ տղեն դի կյալ իրան ճուր տալ: Էն տղեքն էլ տենըմ են, որ ախճիկը դի կյալ իրան ճուր տալ: Ով ճուրը տվել ա, փլանի ախճիկը ինձ ճուր ա տվել, հորը-մորը, ուզի-չուզի, նա ա սըմ ա՛՛ ես էս ինչ ըխճկանը ուզըմ չեմ, նրան են ուզըմ:

Մեծ պասը մտիս ա, ճըրօխնած պասը մտիս ա, Աղի Սարգսի պասը մտիս ա: Մեծ պասին էլ հայերը ծավարը, դու՞ժ ծավարը, առանց էկիլ խառնին ալըրին, մե՞ծ կարաս հողի միջին թաղին ու տանին ածին մեջը, ըռեխը պինդ կալնին, հինգ օր կեներ, վեց օր կեներ:

Ըրեխանցն ասին.- Ա՛, ա՛՛ բալա, քյա՞ցեք իշի դայդի խըռընչեցեք կարասի վրա, բա բալլ շուտ թթվի:

Ըրեխեքն էլ քյնին իշի դայդի խըռանչին:

Հա: Տա էլ.- Ա՛յ կնիկ, թթված կըլի, ըրեխեքը խըռանչել են իշի դայդի, պա՞ց արա:

Պա՞ց անին, պիրին դազդանը լըքցին տը-

նին կրակի վրա, տըքցնին ու փըրթին ուտին: Ուրիշ պոն չի ուտին: Պանիրն ուտին ո՛չ՛ պաս ա, շոռն ուտին ո՛չ, յեղն ուտին ո՛չ՛ պաս ա, մա՞ծուն ուտին ո՛չ՛ պաս ա, սիպտակեղենը⁵ ուտին ո՛չ՛ պաս ա: Ծա՞շ չի էկին, բա յեղը քցիլ դեն ճա՞շի մեջը՝ պաս ա:

Հարց.- Սոված կոտորվում ե՞ն:

Պատասխան.- Բա էն ա մոխրոխն ա էլի, հա՛ մենակ մոխրոխ ուտին, մենակ մոխրոխ: Օխտը շափաթ Մեծ պաս ա, օխտը շափաթ գուտ մոխրոխ ուտին, յեղ, պանիր, մա՞ծուն ուտին ոչ, պաս ա է՛, ո՞նց ուտեն:

5(1280). ՋԱՆ ԳՅՈՒԼՈՒՄ

Ջան գյուլունը մայիսին էր: Հա, ջան գյուլունին ծաղիկը քաղըմ ին, ծաղիկը քաղըմ ին փընջեր ին անըմ ու ընքելը շաջով, սարերընը շաջով նազուկ թխըմ էին, հա՛ ու գյուլունին ջահեկնին՝ ըխճկենքը, տղեքը, տղերանց պարտյեն ճուկ, ըխճկերանց պարտիեն ճուկ, ամենքը մի կողմից սեղան շինած՝ իրար հյուրասիրըմ ին, տանըմ միացընըմ, նա իրա կողմի

¹ «Անպայման պետք է ուտելիք տանե՞ն» հարցին բանասացը բացատրություն է տալիս (ծանոթ. բանասիավաքի):

² Ունկնդիրներից մեկը հարցնում է. «Վերջը մի օքմի էլ ա տեհել չի՞՞ էտ կաղնած ճուրը»:

³ «Իսկ ենթադրենք, որ կաղնի», - պնդում է ունկնդիրը:

⁴ Իջևանի շրջանի գյուղերում ավազին ասում են դու՛մ: Դում ծավար ասելով բանասացը նկատի ունի թե՛ ծավարի մեծությունը, թե՛ շատությունը:

⁵ «Սիպտակեղեն» ասելով բանասացը նկատի ունի կարճամեթերը, որը կենդանական ծագում ունի և Մեծ պասին արգելված է օգտագործել (ծանոթ. բանասիավաքի):

սեղանն եր պիրըմ, նրանք էլ՝ իրանց կողմի, նստըմ ուտըմ-խմըմ:

Վիճակ ին հանըմ, բա ո՞նց: Պան ին անըմ, կոճակնի՝ պուճուր-պուճուր կոճակնի՝ ուանգ-ուանգ, սիպտակ էլ ին քցըմ, սև էլ ին քցըմ, կարմիր էլ ին քցըմ, կանաչ էլ ին քցըմ, ամեն մի գույն ինչ անըմ, ընքելանը ածըմ մի բոթուկի մեջ, մանըմ ե՞ս: Էտ բոթուկեն շղըհարըմ, ընքելանը մի տղա են դոլիցը դի կյալ մի կոճակ հանիլ: Էն կոճակը որ նշանակըմ են, էն կոճակը թե ինչ ա նշանակըմ¹, այ էտ վիճակը՝ ջան գյուլումը հանըմ: Հա՛, խաղ էլ ին ասըմ: Ես կարա՞մ ասեմ ճիսանց ասած խաղը:

6(1281). ԱՆՁԲԵՎԱՌԱՋԱՑՄԱՆ ԾԵՍ

1. Փետի չուք ա, հա՛, չուքը տանըմ ին կը-նանիքը Էն կետըմը, միի լիճ են շինել մեր կետը, ընդեղ վարըմ ին, մին-մնի վրա էլ ճուր ածըմ, անձրև կեր: Մեծ կընանիքը... Հա՛, ես էլ արել եմ, քյաջել եմ: Մին-մնու էլ ճուր վրա տվել, չուքովն էլ կետը վարել ենք: Մի՞նը մաճն ա փըռնել, մի՞նը հորիքն ա քշել: Հա՛, ճըրի մի-չին ինք վարըմ, մի՞նը փըռնըմ ա պաճըր սիե ճըրի միչին տանըմ, մինն էլ քշըմ ա, հա՛), Ե-զան անըմ ա տալի.- Արի՛, հա՛ արի՛, վարի՛, հա՛ վարի:

Ու տյուս ենք կյալի, անձրև ա կյալի:

7(1282)

2. Էն ա մի շիրեփ եր, սիե փետին կապին, մի շոր [վրեն] քցինք, էտ փետը սիե միչովն անց կըցնինք, ամեքը մի կըռնիցը փըռնինք, հա՛ տիկիկի նման ո՞ւ տուռնետուռը ման ածին.

Նուրի, Նուրին էկել ա,

Հաջմա հուրին էկել ա,

Շիլա շապիկ հաքել ա,

¹ Բանասացը նկատի ունի, որ յուրաքանչյուր իր պատկանում է որոշակի տղայի կամ աղջկա, որը որպես վիճակ պետք է հանեն (ծանոթ. բանասիավաքի):

Կարմիր գյոդին կապել ա,

Մի քյքալ ճուր տվեք,

Կըլխին ածենք,

Մի կուտ եղ տվեք,

Սիրտը քսենք:

Էտ տուռնետուռը ման ածին, Էն էլ ման ածին, որ անձրև կյա՛ հա՛: Հըվաքին, մի՞նը ծուտեր, մի՞նը փող տեր, ուրուշ պան չըտին, Էն ա ծուտեր, Էնողվ էլ ի՞նչ կար, ախճիկ ջան, մի կուպել: Հըվաքին էտ, էտ հավաքածը՝ Էն ծուռն էլ տին, Էն փողն էլ տին՝ մի որցակ առնին կամ էրկու որցակ, կամ՝ իրեք, փողը գիդեր էլի: Տանին մի՞նը Չըքնավորըմ մատաղ անին, Էն Չըքնավորը կա ո՞չ, քանդել են, մի՞նը Մուղ-նըմն անին, մի՞նը մեր Սուրփ Սարքսըմն անին [մատաղ] կնանիքը ու էտ միսն էլ բաժանին, թիքա-թիքա բաժանին: Էտ տանողն էլ ուտիլ չէր, հա՛ ուտիլ չըդեր: Էտ էլ սիե անին, ախճիկ ջան²: Չէ՛, իրավունք չուներ, սրտանց անըմ են, նա իրավունք չունի:

Հմի ես, օրինակ, այ մեծ կնիկ եմ, մեր տանը մատաղ անենք, ես Էն մըտաղիցը ուտիլ չեմ³:

Օրենքը՛վը... դե՛ իմ մերը սիե ասել ա՛ մատաղը սրտանց անըմ ես, տու պետկ ա չուտես, բաժանես: Հա՛:

8(1283). ԱՆՁԲԵՎԱՌԱՋԱՑՄԱՆ ԾԵՍ

Չորեյինին մի քանի կնանուց հվաքըմ ին, ընքելանը մի չուք շինըմ, մի կնիկ փըռնըմ էր, էրկու-իրեք կնիկ էլ հորըքնին են, ճիե թելով կապած քյնըմ ճըրի մեչը մտնըմ, ընքելանը վարըմ: Ճուրը վարըմ են, ճուրը վարըմ են էտ կնանիքը ու տըռներիցը պան ին հվաքըմ էլի⁴, ըտեղ մատաղացուն առնըմ, տանըմ փլան տեղը մատաղ անըմ, ուխտատեղը, խաչը:

² «- Տանողն իրավունք չունե՛ր ուտելու,- հարցնում է բանասիավաքը» (ծանոթ. բանասիավաքի):

³ «- Ըտենց ա՛ օրենքով,- հարցնում է լսողներից մեկը» (ծանոթ. բանասիավաքի):

⁴ Բանասացը ցանկանում է ասել, որ տնետուն մքերը էին հավաքում, որի վաճառքից առաջացած գումարով գնվում էր մատաղացուն (ծանոթ. բանասիավաքի):

Տանըմ ուխտատեղը, ուրեմը, մատաղ անըմ, թե դուզ էր, թե դորթ էր, մեկ էլ թըխպեր, անձրև կեր:

9(1284)

Անձրևառաջացման համար Աջաջրում Մույսպես «Նուրի-Նուրի»-ի ծես են կատարել:

Նուրի-Նուրի
Աբջա հուրի
Գալըմ գեթըմ
Բիր դա գեթըմ:

«Աբջա հուրին» խնդրանքն է, որ շուտ անձրև գա, իսկ «Գալըմ գեթըմն» էլ, որ գալուց հետո անձրևը կտրվի:

Վերոհիշյալ բանաձևային խոսքերով, հավաքում էին մատաղի դրամը և մատաղ անում:

10(1285). ԱՆՁՐԵՎԱՍԱՄՓԱՆ ԾԵՍ

Իսկ որ անձրևը կայլիս ա, կտրվըմ չի, էտ էլ փորսմընեն, առաջի ծնունդը, մնել առաջնեկը, հա՛, էտ իրեքն էլ ցեխ են հըվաքըմ, պիրըմ կրակի վրա ածըմ, տըքտաքըմ, որ չորանա, որ անձրևը կըտրի: Էտ էլ տհե ինք անըմ, ամեն հետ տհե անինք:

11(1286). ԿԱՐԿՏԱՍԱՄՓԱՆ ԾԵՍ

Կարկուտի դեպքըմ էլ, ամեն հետ կապին: Կապին, կապին, մարթիքը կապին, ոչ թե մենք կապինք, մարթիքը¹: Կյրովը, հա՛ կյրով ին կապըմ²: Տա չի կարկուտի ժամանակը, ամեն հետ, որ ապրիլ ամիսը կեր, արթեն մայիսը դեն մտնիլ, էտ Սըռըկեղըմը մի օխտը ճամփա

¹ «Մարդ» ասելով բանասացը նկատի ունի տղա-մարդուն:

Իսկ «Մարթիքը ո՞նց ին կապում» հարցին բանասացը այսպես պատասխանեց.

² «- Բա են միչև կիր անեն, կարկուտն էլ...- առարկումն է մեկը» (ծանոթ. բանահավաքի):

կա, էտ օխտը ճամփըմը կին (գալիս էին) օխտը կեղի են իքը թուփ ըլին ըտեղ: Ըտեղ թուփ ըլին, սուրփ Նշանը կեր, ախճիկ ջան: Ըտեղ օխներ: Կետաշենից³ մի մարթ կար, էտքանին կարկուտ կապեր, ով հախը տեր՝ կապեր, ով տեր ոչ, նրանը կապեր ոչ: Պիրին, օրինակ, են իմ հերը պիրեր, են սուրփ Նշանը քյեր ծըլատեր, ու սուրփ Նշան էլ որ ասըմ են՝ էրծաթա խաչ ա: Եջմիածին քյանցել են՝ս: Հա՛, են Բաղդադըմ կըլուին, Բաղդադըքերը⁴ հու տուք տեհել չե՞ք, հա՛ էտ կըլուին, խըստըտին, քավոր էր, պեղ էր, ամեն հետ պեղ ասին, միի են քավորը ասըմ տրան: Պիրին օխնին, օխնին, իմ հերն էլ մի անծին հերինք մորթեր, առանց ծնիլ հերինք, որ իրեք տարի ա ծնել չի, մորթեր, ու բաժանին, մի գրամ միս նա իրան տուն չէր տանիլ: Կմորթեր, կբաժաներ, հետո են էտ կարկուտ կապողն ու սուրփ Նշանը է՞ քյնին էտ արտերը, էտ հանդամառը, միի չիմ ջընջեցին, բալա ջան, չիմ բաղեր ա, էլ արտ չի կա, պան չկա: Չիմ օխնի՞ն, ճուրճ⁵ շաղ տեր, ինչ աներ էտ գիրըմ չեն, այ էտ մինը, էտ են իքը՝ վարթապետը ու քյեր: Տեր, հանձներ էտ կարկուտ կապողին, տե էլ են ա հանդերըմ նստեր կապեր: Այ տհե էլ, կարկուտ չի կեր, մըհի մենք կապինք, մերը կարկուտ չըկեր, էտ Աջաճուրը [կարկուտը] տաներ, կապին ո՞չ, հվատին ո՞չ: Հմի, բալա ջան, աստճու դեն կրակ են քըմ, թուփեր են քըմ, հա՛, ախճիկ ջամ⁶:

³ Սըռըկեղ (Սըռիգյուղ կամ Մարիգյուղ), Կետաշեն (Գետաշեն կամ Կիրանց) - Իջևանի շրջանի գյուղերից են:

⁴ Բաղդադի - մետաքսյա կտորի տեսակ: Իջևանի շրջանում Բաղդադի են անվանում մետաքսյա քանակուսի գլխաշորորը, որոնց վրա բաղամանման նախշեր կան (ծանոթ. բանահավաքի):

⁵ Խոսքը օրինած ջրի մասին է, որը ծեսի ընթացքում վարդապետը շաղ էր տալիս դաշտերում (ծանոթ. բանահավաքի):

⁶ Փաստորեն կարկուտը խափանելու համար անցյալում գյուղացիները և եկեղեցու օգնությանն էին դիմում, և կախարդանքին (ի դեմս կարկուտ կապողի): Ցավոք, չկարողացա պարզել, թե կարկուտ կապողը ինչ միջոցներ էր գործադրում կարկուտը կանխելու համար (ծանոթ. բանահավաքի):

12(1287). ԿԻԼԿԱՊ

Ապրանքնին կորչում ին, ման են կյալի, ման են կյալի, քրթնում չեն. ըրուզունը տատը-պապը կամ հերը-մերը ասըմ են.- Ա՛ բալա, ըպրընքնին կորա՞ն:

- Բա, կորան, ման եկա, քըթա ոչ, թուխպը կոխել էր:

- Կիլկապ արա:

Ո՞նց դի կիլկապ անիլ:

Ասեց.- Սանդերքը պի:

Սանդերքը գիդես չէ՞, պուրթը կըզիլու:

Սանդերքը պիրին, հլե սհե թիզ տընին, էտ չանգերը ոյեր անին, բըզերը ոյեր անին ու ըն-բելանը արանքներովը թելեր պատ տին, ջուռա-ջուռա թելեր պատ տին, կիլկապ: Ապրանքնին ինչքան ուզըմ ա կորած կենան, կիլկանը ուտիլ չդին: Դա՛, կիլկապը էտ ձկի ա, ուրուշ պան չկա:

**Բ. ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ
ՈՒ ՆԱԽՆԱՇՆԱՆԵՐ**

13(1288)

Հավաքնում գտած փոքր ծուն աթարի կամ տախտակի վրա կտորում են, եթե մեջն օձ է լինում, ապա տարին օձի տարի է, իսկ եթե ձվի մեջ դոչ է լինում, տարին լավն է լինում, առատ է լինում:

(Չվի մեջ օձը երկարավուն է, իսկ դոչը՝ պոզավոր: Չուն նման է օձի ձվին):

14(1289)

Կարկուտի ժամանակ շամփուրներ էին կոխում ցեխը, որ կարկուտը կտրվի:

15(1290)

Որպեսզի անծրև գար, կանաչ խոտ էին գցում կրակի մեջ:

16(1291)

Նորածին ըրեխեն, որ նիաթի ա կյալի, ըրեխին համ աղոթըմ են, համ էլ ճուրը ածըմ են մի փոքր ամանի մեջ ու մեջը պեծեր բցըմ, «թըշշան անըմ» ու ճուրը օրորոցի կոխկերին շաղ տալի:

17(1292)

Վախեցած ըրեխին «հրամըմ են» (հարածել):

Վախի համար երեք անգամ հիվանդին փոշի (?) են տալիս: պետք է փոշին անպայման կանաչեղենի հետ տալ¹:

18(1293)

Կիլկապը կիլի կոճով ին անըմ ու աղոթք ին ասըմ:

19(1294)

Կացինը տընըմ են սանդերքի ըռխմը, որ կելն ուտի ոչ [անասունին] քշերը, տընըմ են ու ասըմ են՝ կելն ուտի ոչ էլի: Դե մըտիկ արեք, կացինը դի՞ պահիլ (անվատահուրթուն է հայտնում բանասացը)

20(1295). ՈՍԿԸՈՎՈՏՐԵՔ

Հարսանիքի մախոյակկին փեսացուի հարազատները գնում են հարսնացուի հարազատների ծոտ՝ հարսանիքի օրվա և ծախսերի մասին պայմանավորվելու:

¹ Փակագծում նշված էր, որ պետք էր ավելացնել ձայնագրությունը, սակայն ձայնագրությունը փչացել է և հենարավոր չէ վերականգնել (ծանոթ. բահահավաքի):